

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 8

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի 2023թ. Մայիսի 18-ի նիստի

Խորհրդի 41 անդամներից ներկա էին 28-ը: Նախագահում էր խորհրդի նախագահ դեկան, պրոֆ. Գ.Ղազինյանը, քարտուղարում՝ խորհրդի քարտուղար Տ.Սուջանը: ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնի վարիչ, ի.գ.դ., պրոֆեսոր Արա Հարությունի Գաբուզյանի ծննդյան 60-ամյա հոբելյանի առթիվ գիտական խորհրդի նիստին մասնակցում էին ԵՊՀ ռեկտոր, պատմական գիտությունների դոկտոր, դոցենտ Հովհաննես Հովհաննիսյանը, ԵՊՀ գիտական խորհրդի քարտուղար, բանասիրական գիտությունների թեկնածու, ասիստենտ Մերի Հովհաննիսյանը: Քվորումը ստուգելուց հետո խորհրդի նախագահը քվեարկության դրեց օրակարգը, որը միաձայն հաստատելուց հետո խորհուրդն անցավ օրակարգային հարցերի քննարկմանը (օրակարգը կցվում է):

ՕՐԱԿԱՐԳ

1. Հոբելյան:

2. ԵՊՀ Քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի հաշվետվությունը ամբիոնի գործունեության վերաբերյալ (զեկուցող՝ ամբիոնի վարիչ ի.գ.դ., պրոֆեսոր Ս.Դիլբանդյան):

3. Ընթացիկ հարցեր:

1. ԼՍԵՑԻՆ. Հոբելյան:

ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնի վարիչ, ի.գ.դ., պրոֆեսոր Արա Հարությունի Գաբուզյանի ծննդյան 60-ամյա հոբելյանի առթիվ շնորհավորական խոսքով հանդես եկավ իրավագիտության ֆակուլտետի դեկան, ի.գ.դ., պրոֆեսոր Գագիկ Սերգեյի Ղազինյանը: Պրոֆեսոր Ղազինյանն իր խոսքում նշեց, որ տասնամյակների իր գիտական և մանկավարժական պատկառելի գործունեությամբ պարոն Գաբուզյանն արժանալիորեն վայելում է իրավաբանական մասնագիտական հանրության և ուսանողության մեծ հարգանքն ու անկեղծ սերը: Անուրանալի է վերջինիս ավանդը կրթության բնագավառում, Հայաստանում քրեական իրավունքի գիտության զարգացման, երիտասարդ սերնդի դաստիարակման գործում: Որպես ազնիվ, հայրենանվեր մտավորական, համեստ, լուսավոր և բարոյական բարձր արժեքներ կրող մարդ՝ պարոն Գաբուզյանը տասնամյակներ շարունակ հավատարիմ է երիտասարդներին կրթելու իր առաքելությանը և իր ուսերին է կրում այդ պատասխանատու և բարդ բեռը: Վերջինիս հեղինակած դասագրքերով և գիտական աշխատություններով են կրթվել ու կրթվում իրավաբանների տասնյակ սերունդեր, որոնցից շատերն այսօր պատասխանատու պաշտոններ են զբաղեցնում պետական տարբեր մարմիններում:

Շնորհավորական ուղերձով հանդես եկավ ԵՊՀ ռեկտոր, պատմական գիտությունների դոկտոր, դոցենտ Հովհաննես Հովհաննիսյանը՝ ԵՊՀ-ում արդյունավետ գործունեության ու մեծ վաստակի, կրթության ու գիտության ոլորտների զարգացման գործում ունեցած հսկայական ավանդի համար և ծննդյան հոբելյանի կապակցությամբ ԵՊՀ ոսկե մեդալով պարգևատրելով պրոֆեսորին:

Ռեկտորն ընդգծեց, որ պրոֆեսորն ընտրել է կրթելու, դաստիարակելու և հետազոտելու ստեղծարար ու շնորհակալ ուղին, որն անցնում է արժեքային բարձր հատկանիշներով ու մեծ պատասխանատվությամբ: Պարոն Գաբուզյանի կերպարը համալսարանականի վառ օրինակ է, որը պետք է արժևորել ու գնահատել: Նրա մանկավարժական ու գիտական արդյունավետ գործունեության, երիտասարդ հետազոտողներին աջակցելու պատրաստակամության, ուսանողների մասնագիտական աճի հանդեպ հոգածության շնորհիվ բազմաթիվ արհեստավարժ ու որակյալ մասնագետներ համալրել ու շարունակում են համալրել մասնագիտական ոլորտը: Ռեկտորը հավելեց, որ շնորհակալական անկեղծ խոսքերը վկայությունն են պրոֆեսորի հանդեպ տածվող մեծ հարգանքի, որը պայմանավորում են նրա մարդկային ու մասնագիտական բարձր արժանիքները:

Շնորհավորական ջերմ խոսքերով հանդես եկան ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահ, ի.գ.դ., պրոֆեսոր Լիլիթ Թադևոսյանը, ՀՀ Արդարադատության ակադեմիայի ռեկտոր ի.գ.դ., պրոֆեսոր Սերգեյ Առաքելյանը, ի.գ.դ., պրոֆեսոր Հարություն Խաչիկյանը:

2. ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ Քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի հաշվետվությունը ամբիոնի գործունեության վերաբերյալ (զեկուցող՝ ամբիոնի վարիչ ի.գ.դ., պրոֆեսոր Ս.Դիլբանդյան):

ԵՊՀ Քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի վարիչ, ի.գ.դ., պրոֆեսոր Ս.Դիլբանդյանն ամփոփ տեղեկություններ ներկայացրեց հաշվետու ժամանակահատվածում ամբիոնի գործունեության վերաբերյալ (հաշվետվությունը կցվում է):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Ի.գ.դ., պրոֆեսոր Գ.Ղազինյանը, ի.գ.դ., պրոֆեսոր Հ.Խաչիկյանը, ի.գ.դ., պրոֆեսոր Վ.Հովհաննիսյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հաշվետվությունը գնահատել դրական:

3. Ընթացիկ հարցեր:

3.1. ԼՍԵՑԻՆ. Անվանական կրթաթոշակների թեկնածուների երաշխավորում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Հ.Խաչիկյանը, պրոֆ. Գ.Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվի առնելով Երևանի Պետական Համալսարանի ուսանողական նպաստների, պետական և ներբուհական կրթաթոշակների հատկացման կանոնակարգի՝ ԵՊՀ գիտական խորհրդի՝ 2023 թվականի մարտի 23-ի թիվ 9/3 որոշմամբ փոփոխված 36-րդ կետի 2-րդ նախադասությունը՝ որպես ՀՀ սահմանադրական իրավունքի կենտրոնի սահմանած՝ Վլադիկ Ներսիսյանցի անվան կրթաթոշակի թեկնածու երաշխավորել Էդուարդ Մովսիսյանին (բակալավրիատ, 3-րդ տարի):

Խորհրդի նախագահ

Գ. Ղազինյան

Խորհրդի քարտուղար

Տ.Սուջյան

Քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի

2022-2023 ուսումնական տարվա հաշվետվությունը

2022-2023 ուստարում ամբիոնի դասախոսներն իրականացրել են ուսումնական պլանով և ծրագրերով նախատեսված ուսումնական, մեթոդական և գիտահետազոտական աշխատանքները:

Ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմը հետևյալն է մեկ ակադեմիկոս, երեք պրոֆեսոր, ութ դոցենտ, չորս ասիստենտ և վեց դասախոս:

Ուսումնական պրոցես - 2022-2023թթ. ուս. տարում ամբիոնում ուսումնական պրոցեսը կազմակերպվել և իրականացվել է պատշաճ մակարդակով:

Ամբիոնում առարկաների դասավանդումն իրականացվել է փոփոխված և թարմացված ծրագրերի հիման վրա, պայմանավորված այն հիմնարար փոփոխություններով, որոնք կատարվել են օրենսդրության մեջ: Մասնավորապես, քրեական դատավարություն 1, 2, 3 դասընթացների դասավանդումն իրականացվել է նոր ծրագրերով, նոր աշխատանքային պլանով և մասնագրերով, պայմանավորված քրեական դատավարության նոր օրենսգրքի ընդունման և ուժի մեջ մտնելու հետ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ քրեական դատավարության նոր օրենսգրքում բավականին նոր ինստիտուտներ են ներմուծվել, խնդիր է դրվել ավելի մանրամասն ներկայացնել այդ ինստիտուտները, ցույց տալ դրանց բնութագրական հատկանիշները:

Ամբիոնում շարունակվում է առաջնայնություն տալ գործնական պարապմունքներին, մասնավորապես առավել մեծ ուշադրություն է հատկացվել նոր օրենսգրքի կարգավորումներին համահունչ գործնական խնդիրների քննարկմանը և լուծմանը: Քանի որ գործնական պարապմունքներ վարող դասախոսները միաժամանակ որպես համատեղեողներ պրակտիկ աշխատողներ են, ուստի գործնական պարապմունքների ընթացքում առաջ են քաշում վիճահարույց հարցեր, որոնք օրենսդրական միանշանակ կարգավորում չունեն: Ուսանողները հնարավորություն են ստանում այդ հարցերի կապակցությամբ իրենց դիրքորոշումն արտահայտել:

Կյանքը ցույց է տալիս, որ ուսուցման արդյունավետ ձևը՝ տեսականի և գործնականի ճիշտ զուգակցումն է: Անկասկած գործնական պարապմունքների ընթացքում քննարկման առարկա են դարձել ՀՀ Սահմանադրական դատարանի և ՀՀ Վճռաբեկ դատարանի

նախադեպային այն որոշումները, որոնք համահունչ են քրեական դատավարության նոր օրենսգրքի կարգավորումներին:

Նշված ուսումնական տարում նույնպես արդյունավետ կիրառել ենք ուսումնական դասավանդման <<ՄՈՒԴԵԼ>> համակարգը: Նշված համակարգը Քրեական դատավարություն առարկայի դասավանդման հետ կապված նույնպես ամբողջությամբ թարմացվել է և համապատասխանեցվել է քրեական դատավարության նոր օրենսգրքի իրավական կարգավորումներին:

Դասավանդման <<ՄՈՒԴԵԼ>> ծրագիրը արդյունավետ կիրառվել է հեռակա ուսուցման ուսանողների համար:

Ամբիոնում դասավանդվող բոլոր առարկաների ինչպես միջանկյալ քննությունները, այնպես էլ ընթացիկ ստուգումները անցկացվել են խնդիրների տեսքով: Խնդիրները հիմնականում կազմվել են ՀՀ Սահմանադրական դատարանի և ՀՀ Վճռաբեկ դատարանի նախադեպային պրակտիկայի վրա: Հստակեցվել են խնդիրների պահանջները, ինչը հնարավորություն է տալիս ուսանողին ոչ միայն տալ խնդրի լուծումը, այլև իրավիճակի վերլուծություն և օրենսդրության ճիշտ կիրառում:

Ամբողջությամբ վերանայվել են ավարտական և մագիստրոսական աշխատանքների թեմատիկան, մասնավորապես այն համապատասխանեցվել է քրեական դատավարության նոր օրենսգրքի կարգավորումներին: Թեմատիկայի մեջ փորձել ենք առավել շատ նախապատվություն տալ նոր ինստիտուտներին և ներառել նման բնույթի թեմաներ:

Սույն ուսամնական տարում առավել մեծ ուշադրություն է հատկացվել 3-րդ և 4-րդ կուրսերում դասավանդվող մասնագիտացման դասընթացների հետազոտական բաղադրիչներին: Դասախոսների կողմից ընտրվել են գործնական նշանակության այնպիսի թեմաներ, որոնց տեսական ուսումնասիրությունն անհրաժեշտ է օրենսդրության հետագա կատարելագորման տեսանկյունից:

Ամբիոնը նշված ուսումնական տարում նույնպես բավականին ծանրաբեռնված աշխատեց ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի նախապատրաստման հետ կապված, մասնավորապես հիմնական ուշադրությունը դարձնելով աշխատանքների որակի ապահովմանը:

Սույն ուսումնական տարում երրորդ կուրսում կազմակերպել և անցկացրել ենք մեկ ուսումնական դատախազ, ի տարբերություն նախորդ տարիների դատախազին ներգրավել ենք նաև պրակտիկ աշխատողների, այսինքն դատախազ, պաշտպան և դատավոր:

ՈՒԳԸ աշխատանքները նույնպես իրականացվել են պատշաճ մակարդակով, մասնավորապես՝ սույն ուսումնական տարում կազմակերպվել է երեք այց ՀՀ գլխավոր

դատախազություն, ՀՀ արդարադատության ակադեմիա: Կազմակերպվել է երկու օլիմպիադա՝ «Քրեական դատավարություն» առարկայից, կազմակերպվել է նաև բանախոսություն՝ «Կիրեռահանցագործության քննության մեթոդիկայի առանձնահատկությունները» թեմայով:

Մագիստրատուրայում նույնպես ուսումնական պրոցեսը կազմակերպվել և իրականացվել է պատշաճ մակարդակով:

Ամբիոնը ամբողջությամբ փոխել է մագիստրոսական թեզերի թեմաները՝ դրանք կապելով օրենսդրական նոր զարգացումների հետ և տալով առավել պրակտիկ ուղղվածություն: Նշված ուսումնական տարում ամբիոնում մագիստրոսական աշխատանքների ղեկավարումն ու պաշտպանությունն իրականացվել է պատշաճ մակարդակով:

Գիտահետազոտական աշխատանքներ – 2022-2023 ուսումնական տարում ամբիոնում կատարված գիտահետազոտական աշխատանքների արդյունքները հետևյալն են.

Ամբիոնում սկսել ենք «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն 1» դասագրքի նախապատրաստական աշխատանքները: Քանի որ դատավարության օրենսգիրքը նոր է, ինչպես նաև փոփոխվել է դասընթացի ուսումնական ծրագիրը, ուստի քրեական դատավարության դասագիրքը կլինի ոչ թե նախկինի վերահրատարակությունը, այլ նոր դասագիրք նոր կառուցվածքով և բովանդակությամբ:

Հրատարակվել է յոթ գիտական հոդված և երեք գիտական հոդված հանձնվել է տպագրության:

Ամբիոնը մասնակցել է պրոֆեսորա-դասախոսական կազմի տարեկան գիտական նստաշրջանին: Կարդացվել է մեկ գեկուցում և մեկ գիտական հոդված ներկայացվել է տպագրության:

Ամբիոնի ասպիրանտները և հայցորդները մասնակցել են տարեկան գիտական նստաշրջանին՝ գեկուցումով հանդես են եկել վոթը, որոնց աշխատանքները ներկայացվել են տպագրության:

Մույն ուսումնական տարում ամբիոնի պրոֆեսոր Գ. Ղազիսյանը 2022 թվականի մարտի 28-30 ՌԴ Մոսկվա քաղաքում մասնակցել է Իրավաբանների միջազգային միության կողմից կազմակերպված

<<Արդար աղատություն արդիական հիմքն ախնդիրները>> խորագրով գիտաժողովին: Պրոֆեսոր Գ. Ղազիսյանը հանդիսանալով HAI և ԵՊՀ <<Անչափահասներին արդար աղատություն քարտեղավան և դեռահասներին՝ մարդու իրավունքներին առջխաղացման>> գիտական ծրագրի ղեկավարը՝ մասնակցել է <<Անչափահասներին իրավունքներին պաշտպանությունը նոր քրեական և քրեական դատավարություն օրենսգրքերի համատեքստում>> խորագրով կազմակերպված միջազգային աշխատաժողովին:

Նշված ուսումնական տարում ամբիոնի պրոֆեսոր Ս.Դիրանդյանը 2023 թվականի մարտի 28-ին մասնակցել է Սարանսկում կազմակերպված միջազգային գիտական կոնֆերանսին <<Защита прав человека в периоды внешнеполитической напряженности>> խորագրով, հանդես է եկել գիտական զեկուցումով, որը որպես գիտական հոդված հրատարակվելու է գիտաժողովի արդյունքներով նախապատրաստվող ժողովածուում:

Ամբիոնը 2023թ. մայիսի 12-ին կազմակերպել է միջազգային գիտաժողով նվիրված Քրեական դատավարություն և կրիմինալիստիկայի ամբիոնի վարիչ Հ. Մ. Պիվագյանի 100-ամյակին նվիրված <<Ժամանակակից քրեական դատավարությունը՝ արդի հիմնախնդիրները և զարգացման միտումները>> խորագրով: Գիտաժողովին մասնակցում էին ՌԴ Մոսկվայի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետի Քրեական դատավարության ամբիոնի վարիչ ի. գ. դ. , պրոֆեսոր Լ. Վ. Գոլովկոն, Ս. Պետերբուրգի պետական համալսարանի քրեական դատավարություն և կրիմինալիստիկայի ամբիոնի պրոֆեսորներ իրավաբանական գիտություններին դոկտորներ Ն. Գ. Ստոյկոն և Ա. Վ. Նազարովը: Կոնֆերանսին մասնակցում էին նաև ՀՀ դատական համակարգի, դատախազություն, ինչպես նաև այլ ԲՈՒՀ-րի ներկայացուցիչներ, որոնք նույնպես հանդես են եկել զեկուցումներով:

Ամբիոնի դոցենտ Դավիթ Մելքոնյանը 2023 թվականի փետրվարի 21-ին, որպես փորձագետ մասնակցել է «Փողերի լվացում և կոռուպցիոն հանցագործությունների քննություն» վերատառությամբ վերապատրաստման դասընթացին՝ կազմակերպած Եվրոպայի խորհրդի կողմից դատավորների, դատախազների և քննիչների համար: Ծրագրի շրջանակներում պատրաստել է փողերի լվացման և կոռուպցիոն հանցագործությունների քննության գործնական ուղեցույց:

Ամբիոնի դոցենտ Դավիթ Մելքոնյանը 2022թ. սեպտեմբերի 10-ին՝ որպես փորձագետ մասնակցել է ՄԱԿ-ի կողմից կազմակերպված «Նոր քրեական դատավարության և քրեակատարողական օրենսգրքերի շրջանակներում ՄԻՊ աշխատակազմի մշտադիտարկաման կարողությունների զարգացմանը նվիրված վերապատրաստմանը»: Ծրագրի շրջանակներում նրա կողմից պատրաստվել է ստուգաթերթ:

Ամբիոնի դոցենտ Դավիթ Մելքոնյանը 2022 թվականի հոկտեմբերի 7-ին և 13-ին որպես փորձագետ մասնակցել է Արդարադատության նախարարության կազմակերպած վերապատրաստման դասընթացներին՝ նվիրված ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի առանցքային հարցերին:

Ամբիոնում քննարկվել և հրատարակման է երեսաշխատվորվել ամբիոնի դոցենտ

Ս. Մարաբյանի <<Առաջին ատյանի դատարանում քրեական վարույթով դատական նիստը նախագահողի ուղեցույց>> վերտառությամբ ուսումնասիրական ձեռնարկը:

Ամբիոնի դոցենտ Ս.Մարաբյանը 2022 թվականին, որպես Դատական կարողությունների զարգացման հարցերով ազգային փորձագետ, ներգրավվել է Շվեդիայի ազգային դատարանների ադմինիստրացիայի, ՀՀ Արդարադատության ակադեմիայի (Ակադեմիա) և Բարձրագույն դատական խորհրդի (ԲԴԽ) համատեղ իրականացվող՝ երկարամյա ծրագրին, որը միտված հայ դատավորների կարողությունների ամրապնդմանը և դրանով պայմանավորված դատական համակարգի նկատմամբ հանրային վստահության բարձրացմանը:

Այս ծրագրի շրջանակներում Ս.Մարաբյանը Շվեդ փորձագետների հետ համատեղ մշակում է դատական էթիկայի, դատավորի վարքագծի կանոնների և դատական արհեստի վերաբերյալ դասընթացը՝ ՀՀ դատավորների վերապատրաստման համար, ինչպես նաև հանդես է եկել զեկույցով դատական հաշվետվողականության թեմայով՝ 2022 թվականի դեկտեմբեր ամսին Երևանում անցկացված աշխատաժողովի ընթացքում՝ ներկայացնելով ծավալուն հետազոտություն դատական անկախության, էթիկայի և հաշվետվողականության հարցերի վերաբերյալ:

Բացի այդ, Ս.Մարաբյանի կողմից կազմվել են էթիկական իրավիճակների վերաբերյալ խնդիրներ, որոնք օգտագործվում են նաև ԵՊՀ-ում՝ <<Քրեադատավարական էթիկա>> դասընթացի շրջանակներում:

2022 թվականին Ս.Մարաբյանը մասնակցել է միջազգային կազմակերպությունների կողմից իրականացված մի շարք վերապատրաստման դասընթացների և աշխատաժողովների:

Ս.թ. փետրվարի 25-26-ը արդարադատության ոլորտի մի շարք պրակտիկ մասնագետների մասնակցությամբ ամբիոնի դոցենտներ Արմեն Հովհաննիսյանը և Տաթևիկ Սուջյանը Հանքավան քաղաքում մասնակցել են «Անչափահասների գործերով նոր քրեական և քրեական դատավարության օրենսգրքերի կիրառման գործնական հիմնախնդիրները» թեմայով աշխատաժողովին: Արմեն Հովհաննիսյանը ներկայացրել է 2023 թվականի հունվարի 10-ին կայացված թիվ ՏՂԶ/0016/01/20 որոշումը, որում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը մանրամասն վերլուծության է ենթարկել անչափահասի նկատմամբ պատիժ նշանակելու առանձահատկությունները՝ 2021 թվականին ընդունված և 2022 թվականի հուլիսի 1-ից ուժի մեջ մտած ՀՀ քրեական օրենսգրքի իրավակարգավորումներին համապատասխան: Դոցենտ տաթևիկ Սուջյանը երկայացրել է նաև ԵՊՀ իրավաբանական կլինիկա դիմած անչափահասների և/կամ նրանց խնամակալների կողմից առաջ քաշված հիմնական իրավական խնդիրները: Անդրադարձ է կատարվել «Իրավունք բոլորի համար» ծրագրի շրջանակում հանրակրթական կրթօջախներ այցելությունների ժամանակ անչափահասներին հետաքրքրող հարցերի շրջանակին, հատկապես նրանց կրթության և աշխատանքի իրավունքների վերաբերյալ իրազեկվածությանը և դրանց իրացմանը:

Ամբիոնի դոցենտ Արմեն Հովհաննիսյանը նաև մասնակցել է 2023թ. Երևանում կազմակերպված «Հայաստանում կոռուպցիայի դեմ պայքարի և կանխարգելման ինստիտուցիոնալ կարողությունների հզորացում» ծրագրի շրջանակներում՝ փողերի լվացման և կոռուպցիոն հանցագործությունների հետ կապված ֆինանսական հետաքննությունների, ինչպես նաև քրեական դատավարության կարգով բռնագանձումների թեմայով կոնֆերանս քննարկումներին:

2022 թվականի հոկտեմբերի 10-14 Քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնը ԵՊՀ շրջանակներում կազմակերպել է քննարկում

<<Մագիստրոսական կրթության առանձնահատկությունները Մեծ Բրիտանիայում>>

Թեմայով: Ամբիոնի ասիստենտ Առնոլդ Վարդանյանը ներկայացրել է Մեծ Բրիտանիայում մագիստրոսական ծրագրերի իրականացման առանձնահատկությունները: Քննարկմանը մասնակցել են նաև ԵՊՀ այլ ֆակուլտետների դասախոսներ:

Կադրային աշխատանքներ -- Ամբիոնը կադրային ապահովվածության հետ կապված որոշ խնդիրներ ունի, կապված դասախոսների հիմնական մասի համատեղության հետ: Այսօր ամբիոնում ունենք **երեք հիմնական դասախոս**, իսկ մնացած 20-ը՝ համատեղության կարգով:

Տվյալ պահին ամբիոնն ունի հինգ ասպիրանտ և երկու հայցորդ:

Քրեական դատավարության և կրիմինալիստիկայի

ամբիոնի վարիչ, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
Դիլբանդյան



Ս.

10. 05. 2023թ .